

ՔԱՆԱԿԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմյանիս խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция „Мшакъ“.
Կամ Tiflis, Rédaction „Mschak“.
Տէլէֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և օրն օրերից)

Ցայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Ցայտարարութիւնների համար վճարում են
իրաքանչիւր բառին 2 կոպէկ.
Տէլէֆոն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՀԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է ԲԱՍԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՆԵՐԿԱՅ 1898 ԹԻՒ

ՄՇԱԿ ԴՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՆԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

«Մշակ» տարեկան գինը թէ Ռուսաստանում և թէ արտասահմանում 10 ռուբլի է, տասն
և մէկ և տասն ամսականը՝ 9 ռ., ինն և ութ ամսականը՝ 8 ռ., եօթ ամսականը՝ 7 ռ., վեց ամսականը՝
6 ռ., հինգ ամսականը՝ 5 ռ., չորս ամսականը՝ 4 ռ., երեք ամսականը՝ 3 ռ., երկու ամսականը՝ 2 ռ., մի
ամսականը 1 ռուբլի:

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը (Բաղարայան և Բարձրակայան փողոցն, անկիւն):
Ուրիշ բաղարայանից պէտք է գրելու այս հասցեով. ТИФЛИСЪ, редакция „Мшакъ“, իսկ
արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal arménien „Mschak“.

Ցայտարարութիւններ ընդունվում են թէ հայերէն, թէ ռուսերէն և թէ օտար լեզուներով:

ԲՈՎԱՆԳԱՎՈՒԹԻՒՆ

Ո՞րն է ազգի իսկական հարստութիւնը.— ՆԵՐ-
ՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Հողերտրականութիւնը և նրա
նշանակութիւնը. Նամակ Սարգիսիւնի. Նամակ
Հին-Նախնայնից. Ներքին լուրեր.— ՍՐՏԱՔԻՆ
ՏԵՍՈՒԹԻՒՆ. Փեր և դէմ կարծիքներ Նամակ
Ամերիկայից. Արտաքին լուրեր.— ԽԱՌՆ ԼՈՒ-
ՐԵՐ.— ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.— ԲԱՆԱՍԻՐԱ-
ԿԱՆ. Ռաշիդ:

ՈՐՆ Է ԱԶԳԻ ԻՍԿԱԿԱՆ ՀԱՐՏՈՒԹԻՒՆԸ

Ո՞ր ազգն է ամենից հարուստ և ինչն է կազ-
մում ազգերի իսկական հարստութեան գլխաւոր
աղբիւրը—անս մի հարց, որով վարդը՝ զբաղ-
ված է քաղաքատնտեսական գիտութիւնը: Սօ-
ցիալական էվոլյուցիայի զանազան շրջաններում
այդ մասին տարբեր կարծիքներ են տիրապե-
տել: Հողատիրութեան խոշոր ներկայացուցիչնե-
րի գերակշռութեան շրջանում, քաղաքատնտե-
սութիւնը այն համոզմունքն ունէր, թէ հարստ-
ւորութեան գլխաւոր աղբիւրը հողի և նրա ար-
տադրութիւններն մէջ է կայանում: Բուրժուա-
զիայի տիրապետութեան շրջանում նա հաւա-
տացնում էր, որ ամբողջ ոյժը դրամագլխի մէջ
է և դրամագլուխ ստեղծել նա հասկանում էր
ինչպիսիք արդիւնքը, որ պէտք է գործ
ածվի նոր արդիւնաբերութեան համար: Վեր-
ջապէս, բանտարական շարժումների և արևմուտ-
քում ծագած չորրորդ դասակարգի քաղաքական
իշխանութեան շրջանում, նա սկսեց պայքո-
ւցանել, որ գործի ամբողջ էութիւնը, հարստու-
թիւնը կայանում է հասարակ աշխատութեան մէջ:
Ցայտանի անտեսագէտ Քարլ Կապուցիանում
է, որ ազգերի հարստութեան ամենազգլխաւոր

աղբիւրը բուրժուայն ուրիշ ֆակտոր է, այն է՝
մտաւոր գործունէութեան, մտաւոր
ստեղծագործութեան ֆակտորը:

Ուրեմն ամենից հարուստ ազգը նա չէ, ով
ունի շատ հող, դրամ, արդիւնաբերութիւն, այլ
ով ամենից շատ մտաւոր ստեղծագործութիւն,
մտաւոր գործունէութիւն է արտայայտում: Այդ
թէօրիան Քարլ Կապուցիան է ապացուցա-
նում: Քաղաքատնտեսական գիտութեան հայրը՝
Ջոն Ստուարտ Մլլը իր հոշակաւոր «Քաղաքա-
տնտեսական հիմունք» աշխատութեան մէջ
հաստատում է, որ մի երկրի կանխիկ, կուտակ-
ված հարստութիւնը կրթականիւնը է շատ
մեծ արագութեամբ, երբ ոչնչանում է: Օրինակ՝
Ռուսաստանում, 1812 թվից յետոյ, Ֆրանսիա-
յում 1870-ի պատերազմից յետոյ, երկրի հարու-
ստութիւնը անհամեմատ շատ մեծ չափով զար-
գացաւ: Ինչից է առաջ գալիս այդ: Պատճառը
շատ պարզ է. երկրի զարգացումը, այսինքն՝
արդիւնքների և նիւթերի գումարը տասնակ
տարիներով կամ նոյն իսկ մի տարի ամբարված՝
չէ մնում անշարժ, այլ անընդհատ, տարեց տա-
րի, օրեցօր վերարտադրվում է: Բայց ո՞ր ֆակ-
տորն է վերարտադրողը, որից բխում աշխատու-
թիւնը, այն էլ դրամագլխի արդիւնքով, ինչպէս ընդ-
հանրապէս կարծում են: Ոչ, վերարտադրողը
ազգի մտաւոր աշխատութիւնն է և անս ինչու:

Երեւակայնք մի քայլ, որ մի գեղեցիկ օր,
մի երկրում անձեռնմխելի մնայ դրամագլխի,
այսինքն բերքերի և նիւթերի անաղին պաշար,
պարզապէս մնան նաև հազարի քանակութեամբ
աշխատաւոր ձեռքեր, բայց մի բան ջնջված,
ոչնչացած լինի—որ և է յիշողութիւնն և աշխ-
տի գիւտերի մասին: Մարդկային միտքը

հետզհետէ հնարել է արդիւնաբերութեան զա-
նազան գործիքներ և մեքենաներ ամենապար-
զից սկսած մինչև ամենաբարդը, կրակից, ած-
խից, կաշնից սկսած մինչև նորագոյն գինամի-
տային մեքենաները. նա ստեղծել է շատ յար-
մարութիւններ և այդ գործիքների ու յարմա-
րութիւնների օգնութեամբ նա մշակում, վերար-
տադրում է հում նիւթը, բերքը—դրամագլուխը,
նոյն իսկ աշխատութեան բաժանումը, արդիւ-
նաբերութեան փոխանակութիւնը և պրօցէսը
դարձեալ արդիւնք են մարդկային մտքի հնա-
րագիտութեան Արդ, կրկնում ենք, ենթադրեմք
մի քայլ, որ մարդկութիւնը յանկարծ կորցնի
որ և է յիշողութիւնն այդ բոլոր անցեալ գիւտե-
րի մասին: Արդեօք մարդկութիւնը կամ այն
ազգը, որի հետ պատահի այդ աղէտը, կարող է
երկու երեք տարում վերականգնել կորցրած
ամբողջ նիւթական հարստութիւնը: Ի հարկէ
ոչ, այդ ազգը ստիպված կը լինի նորից սկսել
մարդկային գիւտերի և հնարների
ամբողջ պատմութիւնը: Ուրեմն հէնց
միայն այդ տեսութիւնը ցոյց է տալիս, որ ար-
դիւնաբերութեան, հետևաբար և հարստութեան
ամենակարևոր ֆակտորը հանդիսանում է գիւ-
տը, հնարը, այսինքն հնարողի մտաւոր
աշխատութիւնը:

Բայց Քարլի հիմքը միայն այդ տեսական ա-
պացույցը չէ: Կայ և փաստական, անհերքելի ա-
պացույց: Տնտեսական ասպարէզում այն ազգերն
են ամենից առաջ ընկնում, որոնց մէջ ամենից
շատ է դարձացած գիւտութեան, հետևաբար
ուսման, մարդիկ ազատութիւնը: Մենք
տեսնում ենք որ մի բուռն կղզիաբնակներ
(անգլիացիները), որոնք զուրկ են գրեթէ բնա-
կան հարստութիւններից (ուրիշների հետ համե-
մատած), հանդիսանում են մի հզոր ազգ, որ
տիրապետում է ծովի վրա և զիջակարում է
համաշխարհային արդիւնաբերութիւնը: Եւ այդ
զարգացման նրանք հասել են իրանց մտաւոր
գործունէութեամբ: Վեր առնենք այժմ Արեւելը,
իր անսպառ, ճոխ բնական հարստութիւններով,
ընդարձակ տարածութիւններով, բայց անգար-
կացած գիւտութեան կողմից: Մենք տեսնում ենք,
որ նա շատ յետ է մնացել տնտեսական զար-
գացման մէջ, չարունակ հանդիպում է սովի,
համաճարակ հիւանդութիւնների և գրեթէ աղ-
քատութեան մէջ է: Պատճառը մտաւոր ան-
շարժութիւնը, մտաւոր ծուլութիւնն է:

Բայց մի ուրիշ աւելի համոզեցուցիչ, անհեր-
քելի, ապացուց կայ Քարլի տեսութեան հա-
մար: Ամեն մի նոր գիւտ, մի նոր նուաճում
արժէքից զուրկ է որ և է նախկին մի արդիւնք,

որ համարվում էր ազգի հարստութեան մի մա-
սը: Օրինակ՝ եթէ վաղը հնարեն մի նոր վա-
ռելիք, որի ձեռք բերելը աւելի էժան նստի և
որը աւելի շատ տաքութիւն տա, քան քարա-
ծուխը, անշուշտ, վերջին արժէքը բոլորովին
կրկնի և նա ոչ մի գին չի ունենայ. իսկ չէ
որ նա այժմ մեծ հարստութիւն է կազմում:
Նախը ապօր մեծ հարստութիւն է կազմում,
բայց եթէ վաղը գտնեն մի նիւթ, որ բռնի նրա
տեղը և աւելի էժան լինի, ամբողջ Բագուն իր
բոլոր հարստութիւնով կոչնչանայ: Եթէ վաղը
հնարեն հաց և անդառնութեան նիւթեր պատ-
րաստելու մի էժան քիմիական կանաչակ, իսկոյն
հողի և ցորենի արժէքը զրօյի կը հաւասարվի:

Պարզ է ուրեմն, որ մի նոր գիւտ, մի նոր
գիտնական նուաճում, կարող է կամ ոչնչացնել,
կամ նուազեցնել այս կամ այն արտադրութեան,
ապարքի ու դրամագլխի արժէքը, գինը, նուազե-
ցնել հարստութիւնը: Իսկ այդ գիւտը արդիւնք է
մտաւոր ստեղծագործութեան և հետևա-
բար ազգերի իսկական հարստութեան աղբիւրը
պէտք է համարել մտաւոր գործունէութիւնը:
Որքան մեծ է այդ գործունէութիւնը, այնքան և հա-
րուստ է ազգը, եթէ թուով նա ամենափոքր
ազգ էլ լինի:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀՈԳԵՒՈՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՆՐԱ ՆՇԱՆԱԿՈՒ-
ԹԻՒՆԸ

(Նամակ Խմբագրութեան)

Մինչև այժմ մեր խօսքը ընդհանրապէս հողե-
ւորականութեան և նրա բուն կոչման (բարոյա-
խօսական) մասին էր: Անցնեց այժմ հայոց հո-
ղեւորականութեանը՝ աչքի առաջ ունենալով նրա
գործունէութեան յատուկ պայմանները:

Բայց վերոյիշեալ գլխաւոր առաջնակարգ և
ընդհանուր կոչումից, հայոց հողեւորականութիւ-
նը, պատահական զանազան պայմանների շնոր-
հիւ, ստիպված է լինում կատարել որոշ դերեր՝
ժամանակի բերած պահանջների համաձայն: Այս
վերջին փաստը պարզ կը լինի ամեն մէկի հա-
մար, ով մի հայեացք կը գցի այժմեան հողեւո-
րականութեան գործունէութեան վրա: Վերջին
գարի հայոց հողեւորականութեան պատմութիւնը և
մեր ներկայ դրութիւնը պարզ ցոյց են տալիս
գործունէութեան այն լայն և բազմակողմանի
սպարէզը, որ վիճակված է մեր հողեւորակա-
նութեանը և որին նա անընդունակ է հանդի-
սացել շատ քիչ բացառութեամբ (Ներքին Աշ-

ես կարծում եմ՝ գաղթելու կամ պաշտպանվելու
մասին խօսք լինել չէ կարող, մինչև Ամին ա-
ղայի տրամադրութեան մասին հաստատ բան
չիմանանք: Ո՞վ գիտէ, գուցէ այդ աղան յանձն
առնէ միանալ մեզ հետ, ի սէր այն թշնամու-
թեան, որ նա տածում է դէպի ասորացիները.
սպասենք մի փոքր էլ. Ռաշիդը խօսք է տուել
այսօրվայ ժողովին հասնել:

Առաջարկութիւնը ինչպիսի էր: Ամենքը նախ
լսեցին, ապա սկսվեց խօսակցութիւն թուրքի
մասին. այս ու այն կողմից հարցեր էին ուղ-
ղվում ուսումնական, և նա պատմում էր ցա-
ւալի կոտորածի մանրամասնութիւնները, որքան
իրան յայտնի էր: Անցան ժամեր:

Բախում լավեցին ձիււ տորփիւն, քիչ յետոյ
ներս մտաւ Ռաշիդը, յարգանքով գլուխ տուեց
նստողներին և կանգ առաւ դռան մօտ. գիւղի
իշխանների և զօր ներկայութեամբ նա նստեց
համարձակութիւն չունելով Ամինը էլ լսեցին,
հետաքրքրված հայեացքները դէպի Ռաշիդն ուղ-
ղեցին: Նրա պատմութեանից էր կախված ամեն-
քի կեանքն ու մահը և աշխատում էին նրա
դէմքի վրա կարգաւ նրա ներքինը:

Ռաշիդը համառօտ կերպով հարցրեց իր
պատգամաւորութեան վաղճանը. Ամին աղան
շատ սիրալիր ընդունելութիւն էր ցոյց տուել
ներս, և խոստացել էր մի քանի օրից յետոյ
իր ցեղակիցներով օգնութեան հասնել:

Ուրախութիւնն ընդհանուր կըլար, ամենքի

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՌԱՇԻԴ

(Պատկեր)

Y

Դիչեր է: Բանին ընկղմված է խոր քնի մէջ:
Տներում վաղուց ճրագները մարել են: Ամեն
տեղ ձայն ու շարժումը դադարել է. միայն
Տէր-Մարութի օղայում դեռ պղլում է ձէթի
ճրագը՝ մի աղօտ, խորհրդաւոր լոյս սփռելով
իր շուրջը: Այնտեղ նստողների դէմքերը հալիւ
ճանաչվում են: Վերեւում նստած է Տէր-Մարու-
թը, իր անբաժան տէր-ուղբմեան ձեռքին համ-
կելով՝ նրանից ցած, մինչդարձ վրա բաղվել է
ուսումնական, որ ազանաբար կուլ է տալիս չի-
բուխի դուռն, խեղդող ծուխը և ամեն անգամ
երբ լույս-լույս բարձրացնում է, սկսում է
ժանր հազար խաղաղ կրճերից: Այստեղ են և
Մէլիք-Սարգիսը, Մէլիք-Առաքելը և մի քանի
այլ ծերունիներ: Նստած օղայի աջ ու ձախ
կողմերում ամենքն էլ մտախոհ են, ամենքի
կնճուռ ճակատը ծանր հոգեւոր կնիք է կրում
իր վրա: Բոլոր նշաններից երևում է, որ սրանք
հաւաքված են այստեղ մի ծանր, մի մաշող
խնդիր վճռելու համար: Ամենքի հայեացքն ուղ-

ղված է Տէր-Մարութի և ուսումնական վրա. իշ-
խանների աւագներից սպասում են լսել ժողովի
նպատակը:

—Ասիանցիները մեզ կրկին սպառնում են,
ընդհատեց լուսնիւնը ուսումնական, Խուլիս իս-
պառ տակն ու վրա են արել չիկանները. մենք
մնացել ենք առանց օգնականի, առանց թիւ ու
թիկունքի: Ռաշիդն էլ, չը գիտեմ որտեղից,
հաստատ կերպով լսել է, որ այս օրերս մենք
կենթարկվենք ասիանցիների յարձակման: Ի՞նչ
պէտք է անել:

Տիրեց մի ծնող, չարագուշակ լուսնիւն.
պատկառելի ծերերի ճակատների կնճիւղներն էլ
աւելի խռայան, խիտ սպիտակած յօնքերն էլ
աւելի կլուկեցան: Ամենքն էլ զգում էին, որ
գրութիւնը ծանր է և յուսահատական, բայց ելք
գտնելն այնքան էլ հեշտ չէր: Ամին մէկը խոր-
հում էր, բայց ոչ որ չէր համարձակվում առա-
ջինը խօսել. լուսնիւնն ընդհատվում էր միայն
տէրերի տէր-ուղբմեայի միաձայն չրիկոցով և
ուսումնական խաղաղ հաղով, իսկ չիբուխի ծու-
խը պալան-պալան բարձրանում էր, հաւաք-
բանում:

—Ուսումնական, ասաց վերջապէս Տէր-Մարու-
թը, երբ Խուլիք բարոյքանդ է եղած և մենք
մնացել ենք մենակ, եւ կարծում եմ, մեզ մը-
նում է միայն գաղթել և օր առաջ հեռանալ
այս արկածոտ երկրից: Մեր գիւղը՝ իր հիմար-
կութեան օրից մինչև այժմ տասն անգամ բա-

տարակերպ, Գեորգ IV): Այս պատմությունը մեզ պարզ ցույց է տալիս, թե ըստի-քանի հարցեր, այն էլ կենսական և ամենակարևոր հարցեր, ժամանակի և մեզ չբացատրող հանգամանքների շնորհիվ, իրանց անմիջական լուծումը կարող են ստանալ միայն մեր հոգևորականությունից, որ ներկայանում է որպես միակ իրաւասու մարմին: Իսկ մենք եւրոպական կղերի պատմությունը մեզ առաջնորդ ունենալով, մի անտեղի հայեցողություններ մուծում ենք հայոց հոգևորականության էական նշանակությունը, աշխատում ենք կղերի նշանակությունը բացատրել լուսավոր և ազատ աշխարհում նրա ունեցած դիրքով և կատարած դերով, և այդպիսով միանգամայն կորցնում ենք մեր ոտքերի տակ ունեցած հողը և չեղձում խնդրի բուն և նպատակայարմար ուժումից: Եւ հետևապէս այդ անտեղի հայեցողություններ աշխատելով եւրոպական կղերի պատմությանը չափել և որոշել հայ հոգևորականության նշանակությունը, մենք մուռացութեան ենք տալիս այն, որ շատ կենսական և ամենախոշոր հարցերի լուծումը, բարեի բերմանը, մեղանում յանձնված է միայն ու միայն հոգևորականությունից: Մենք, ի հարկէ, դէմ չենք չորհանայեց լինելուն, դէմ չենք այդ բանին՝ կը նշանակէ դէմ լինել ընդհանուր և բազմակողմանի դարգացման, բայց մենք, ինչպէս յոգուածի սկզբում էլ նկատեցինք, մեր հոգևորականությունն մասին խօսելիս և դատելիս անհրաժեշտ և նպատակայարմար ենք գտնում երբեք չը մտաւալ, որ խօսքը միայն հայոց հոգևորականության մասին է, որը, կրկնում ենք, ոչ թէ միայն կոչված է կատարելու իր համաժողովրդային դերը (բարոյախօսականը) այլ և շատ ուրիշ գործեր...

Թէ այսօր շատերն են անբաւական մեր այսման հոգևորականներից, դա շատ իրաւացի է. բայց միթէ մեր այսման հոգևորականության անընդունակությունից առաջ եկած անպէտքությունը կարող է մեզ իրաւունք տալ բացասել մի կատարեալ և գործունէ հոգևորականություն կարեւորությունը: Ահա թէ ինչու մենք վստահման ենք խորհուրդ տալ՝ դիմել հայ ազգի և նրա հոգևորականության XIX-րդ դարի պատմությանը՝ տեսնելու և հասկանալու համար այն բազմապիսի և լուրջ խնդիրները, որոնք մեղանում կարող են լուծվել հոգևորականության ձեռքով: Այս բանը պարզելուց յետոյ՝ կազմել հոգևորականության մի լուրջ առաջնություն՝ մի այնպիսի հոգևորականություն, որը ընդունակ լինելու կատարելու այդ գործը, իսկ սրանից յետոյ՝ աշխատել ստեղծելու հայկական կենտրոն՝ մի այդպիսի հոգևորական դասակարգ: Ահա յիշած փաստերից և մտքերից ընթերցողը կհարկապէս, որ մենք միանգամայն դէմ ենք այն անձանց ուղղութեանը, որոնք բարոյութեան են կամ կատարեալ անտարբերություն դէպի հոգևորականությունը, կամ թէ նրա աւելորդ և վնասակար տարր լինելը:

Մեր հոգևորականության ցաւալար հիւանդությունները մի բացառիկ, մասնաւոր և միայն այդ դասակարգին վերաբերեալ երևոյթ է: Փա մի ընդհանուր չարիք է, որով վարակված է մեր ընդհանուր կենսը իր բոլոր կողմերով: Մենք ինքներս ենք պակասաւոր, հետևաբար

հոգևորականության հետ պակասաւոր են նաև մեր բոլոր դասակարգերն ու հիմնարկությունները: Մենք մեր պակասությունները՝ միամտաբար կամ ինքնախաբէութեամբ՝ գցում ենք մեր հոգևորականության վրա, կարծես թէ այդ տարրը մեղանից չէ բուսել, այլ երկնքից, իբրև մի պատուհան, թափվել է մեր գլխին: Այն բոլոր կեդրոն ու աղտը, որոնք մեզ գլուխք են պատճառում և որոնց մենք տեսնում ենք հոգևորականության մէջ արմատացած, մենք տեսնում ենք դրանց աղբիւրները մեր հասարակության մէջ: Զահէի մէջ միայն իրան վայել բոյսեր կարող են ծնւլ: Մեր հասարակությունը իրան վայել հոգևորականություն: Դիտեցէ՛ք մեր հասարակության բոլոր խաւերը, բուն մեր դասակարգերը, և դուք կը տեսնէք, որ ամեն ասպարէզ դատարկ և զուրկ է անձնուէր գործողից, անխնայ աշխատաւորից և բարեխիղճ անձնաւորութիւններից: Մեր զննորդութիւններից՝ որ մէկը ասպարէզ հանց անձնուէր և մաքուր գործիչ մի տիպար, ինքնապարտութիւններից՝ որ մէկը առաջ բերեց մի ընդունակ ու բարեխիղճ գործող: Մեր աղքատ պարբերական դրականությունը մինչև այսօր մեզ չէ տուել մի տեղական և օրինաւոր ամապիւր: Ընդհանրապէս մի հայեցող գեղեցիկ մեր մտաւոր դարգացման վրա, և կը տեսնէք, որ չը կան մեղանում մաքուր գիտությունների ոգևորվող անձնաւորութիւններ: Զիչէ է, որ ամեն տարի հայերս հարկերնեով լցնում ենք միջնակարգ և բարձրագոյն դպրոցները, բայց այդ միջան պատճառը ուսումնասիրութեան ծարաւը չէ. նայեցէ՛ք ուսումնասիրութեան վրա և դուք կը համոզվէք, որ նրանց տեսնանք միակ առարկան նիւթ և կան շահն է: Այդպիսի պայմաններում դանազան «կոմպրոմիսներ» մատնացուց անելը՝ դատարկ պատուական և ինքնախաբէութեան միջոցներ են:

Բայց այն յաճախ լսվող անբաւական ձայները, որոնք կրկնվում են մամուլի էջերում, ապացոյց են որ մենք ընդ առաջադիմել ենք և ընդ բարձրացել ենք անմիջիկապ իրականության ստոր մակերևոյթից: Սա ի հարկէ ապագայ առաջագիտութեան մի համառոտ գրաւական է: Բայց այդ անբաւականությունը և նրան կից ընդհանրապատկաններն ու մերկացումները ինչքան էլ կարեւոր և համարելի լինեն, դարձեալ դեռ միայն գործի կէտն են: Խօսքից հարկաւոր է գործին անցնել, ընդհանրութիւնից դէպի գործունէություն, որը միայն կարող է տալ դրական արգասիքներ: Մենք մինչ այժմ մատնանիչ առեցիկը մեր ներկայի անմիջիկապ կողմերի վրա, բայց և այնպէս, թէպէս շատ դանդաղ կերպով, մեր հասարակութեան միջնորդը հետզհետէ ընդունում է իր մէջ դարգացում և լուսավոր տարրեր, որոնք ընդհին կերպարանափոխում են մեր հասարակութեան կաղնիքները: Մասան ինքն իրան թողած, անխտան կերպով խարխաւում է կենսի խաւարում: Նրան հարկաւոր է առաջնորդող և ղեկավարող անձնաւորութիւն, որին նա որոնում է մի ինչ որ ներքին ընդհանրման և որին գտնելով ընդունում է իրան պարագլուխ: Առաջադիմութիւնը իրագործվում է հասարակական կենսում մի ոյժով, որն ունի իր զօրավարը և իր զօրքը. յաղթություն հասարակութեանը միջոցներն ի կատար էին ածված: Փողոցների մուտքերը փակված էին սանդուղիներով, խրատներով և պատնէշներով: Սկզբնորոշ կարգին տեղ էին բռնել իր մեծ հրացանաւորները: Մնացած խմբերը ջրով էին այս ու այն կասկածելի փողոցներում: Անհրաժեշտ էր նաև թշնամիների ճանապարհի վրա պահակներ դնել, որ նրանց երևալուն պէս խնայ տան պատրաստվելու:

Այս նպատակով Ռաշիդը մի խումբ զոկեց և դիմեց դէպի Տիրամօր բլուրը: Խումբն անմիջապէս մարզեցով բարձրացաւ և ըլլել այս ու այն կողմում, այս ու այն ժայռի յետևում յարձարաւոր տեղեր դրաւ: Արա հասաւ գիշերը, խաւար և անաւոր դիւեր: Ռէն-Պետուն և Տէր-Մարտը միասին չըրջեցին գիւղի բլուր փողոցները, դիտեցին պատրաստութիւնները, բաշխեցին պահակներ և բխտարդներին, իսկ խումբն ու յուզված կանայք ու երեխաները խորհրդով տուին գնալ ընդուն, հաւատացնելով, որ դրուկներն այնքան էլ վտանգաւոր չէ. Աստուած ողորմած է, չուտով օգնութիւն կը տաւան: Ամանք՝ համեմատաբար աւելի որոտները, ներս մտան մի կերպ պակեցնել ջնջելու, ինչպէս և փոքրիկ մանուկները: Իսկ վախկոտները թէկ ներս մտան, բայց թուն չը մօտեցաւ նրանց աչքերին, խեղճներ այս ու այն անկիւնում կուշ եկած նստեցին, ականջներն աղմուկի, հրացանաձգութեան պահելով: Եւ գիւղը լռեց:

մար անհրաժեշտ է թէ զօրքը և թէ զօրավարը: Զօրավարը յենվում է զօրքի վրա, նրանից ստանալով գործադրելի ոյժը. իսկ զօրքը՝ այդ ոյժի շտեմարանը, առաջ է ընթանում զօրավարի ցոյց տուած ուղղութեամբ, որի հետ նա իր արամադրութեամբ համամիտ է: Այժմ՝ հարց է, թէ մեր հասարակութեան յետևից ընկած հասարակութիւնն ընդունակ է արդեօք այդպիսի խոշոր անձնաւորութիւններ ստեղծելու... Ո՛վ դիտէ, գոչէ մեր հայկական անապատում կայ մի օաղիս, որտեղից առաջ կը գան հակա անձնաւորութիւններ՝ զուրկ մեր լիբրութիւններից և օժտված հզուազիւտ ձիրքերով, որոնցից զուրկ ենք մենք...

Ուրեմն՝ եթէ կան մեղանում ձայնաւոր խնտեղիւններ, գործելու ծարաւ, մաքուր և անձնուէր անձնաւորութիւններ, թի՛ղ անվախ կերպով դիմեն դէպի այդ ասպարէզը, որ կայ գործելու լայն շրջան և գործունէութեան բազմա-տեսակ միջոցներ, որոնցով կարելի է օգտվել միայն հոգևորական դանաւորով:

Ս. Տիգրանեան

Պետերբուրգ:

ՆԱՄԱԿ ՍԱՐԴԱՍԻՇԻՑ

Օգոստոսի 5-ին

Ահա քանի ժամանակ է, ինչ Սարդասիւի հայ հասարակութիւնը խիստ գրգռված է բռնութեան մի նոր դէպքի պատճառով. ամենքի բերանից անդադար լսվում է անվերջ հայհոյանք և պարտաւանդ: Դէպքը հետեւան է: Մի պարոն, աւուր Քիլոգրիգով մի տարուց աւելի է, որ ուղղում է ամուսնանալ Սարդասիւի վերաբնակվող Շամցեանի աղջկայ հետ. նա աղջկայ ծնողներից ընդունելութիւն էր գտնում և յաճախում էր նրանց տուն: Այդ ժամանակամիջոցում պարոնը մի քանի անգամ առաջարկութիւն էր աւելի և խնդիր օրիորդի ձեռքը և միշտ մերժում էր ստացել վերջինի կողմից. նա մերժում էր այն հիման վրա, որ ուսուցիչը այլազգի է, և որին չէր սիրում և չէր համակրում. մի և նոյն ժամանակ օրիորդի ծնողները միշտ աշխատում էին համոզել իրանց աղջկան և հաւատացնում էին իրենացուն, որ թէպէտ օրիորդը մերժում է, բայց այնու ամենայն բանը գլուխ կը գայ և այս յոյսով քաջաբերվելով, պ. Քիլոգրիգով կըրկնապատկեց իր այցելութիւնները: Իսկ օրիորդը հալվում ու մաշվում էր և կամենալով ազատվել այս անախորժ գրուկից, անհրաժեշտ դադարելով դիմեց Վարս իր աղապաններից մէկին. վերջինս երկու ամիս առաջ եկաւ Սարդասիւի և գիշերով օրիորդին փախցրեց Վարս: Մի քանի ժամանակից յետոյ աղջկայ ծնողները գնացին Վարս և նրանց ամուսնից տուն վերադարձնել աղջկան: Անցեալ ամիս վերջին պ. Քիլոգրիգով վերջին անգամ դիմեց և ստացաւ օրիորդի համաձայնութիւնը. օրիորդը համաձայնել էր, որովհետեւ ծնողները բռնութիւն էին դրած դէպի Եւ ինչ էք կարծում, նշանաւորեցիք մի օր յետոյ աղջկալ բացարձակապէս նորից մերժում է, ծնկալեց անդաշնով իր ծնողներին, որ չը բռնանան իր կամքի վրա. նրա լեզուն բացվում է և միանգամից համարձակվում է ասել, որ չես ամուսնանալ չես ուղղում այդ մարդու հետ: Օրիորդը այս

Այն դիւերը մօտ էր. չորս կողմից ոչ մի ձայն չէր լսվում. միայն գետակը յամառ կերպով շարունակում էր ձեռնել իր ժայռոտ ափերը և աղմուկում էր չըլլակայր: Անյիշելի ժամանակներից նա ձեռնում էր այդ ժայռերը, նոյն իսկ Բանունը վաղուց էր սովորել նրա որոտմունքի տակ հանդիստ քնանալ, իսկ ժամուկներն իրանց օրօրոցներում այդ ձայնով աւելի հանդիստ էին ջընում: Սա մի հակապակաս օրօր էր նրանց համար. բայց այսօր՝ այս գիշերովը ահաւոր պատճառ, կասեց գետի ձայնի աւելի զօրեղ էր, գոռոցն աւելի ահաւոր, արթուն գիւղացիք անգամ սուկում էին նրա ձայնից, անցաւ դարձեալ մի քանի ժամ:

Ծանկարծ լսվեց մի հրացանի ձայն. ինչքան և բարձր էր գետի գոռոցը, դարձեալ չը կարողացաւ խնայել այդ ձայնը, որ լսվեց Տիրամօր բլրի կողմից և որ միանգամայն բաւական էր, որ զարհուրած գիւղը՝ մինչև ամենափոքր երեխան ոտքի վրա լինէին: Շուտով այդ որոտին յետևեց բազմաթիւ հրացանների տրոպոց, պարզ էր, որ Տիրամօր բլրի մօտ Ռաշիդի խումբն ընդհարվում էր թշնամիների հետ: Հրացանաձգութիւնը հետզհետէ մօտենում էր և կէս ժամ չանցած՝ Ռաշիդն իր ընկերներով ներս մտաւ գիւղը, որ ամենքն արդէն զարթել էին: Մեծ թէ փոքր, մարդ թէ կին թուփվել էին փողոցները և սարսափած հետևում էին անաւոր անցքին: Քիւղից ոչ հեռու երևեցան ձիաւորված սուկերներ, և լսվեցին ոտների ձայներ. և յանկարծ

խօսքերի հետ՝ դէն և չարտում նշանդէքի մատանի և հարմութեան քօղը: Հիմա թէ ծնողների յանդիմանութիւնները և թէ հայ բաճանայի միջամտութիւնը ոչինչ աղբեցութիւն չեն գործում օրիորդի վրա: Եւ ինչպէս լսում ենք, օրիորդը արդէն հեռացել է Տօր տանից և ապրում է Սարդասիւի մի մի աղապանի մօտ: Ահա այդ դէպքն է, որ մեր հասարակութեան խաղաղ կենսը վրդովել է: Մի կողմից մեղադրում են աղջկան, բայց մեծ մասամբ մեղադրում են նրա ծնողներին: Եւ ճշմարիտ, որ վերջինները մեղաւոր են:

ՆԱՄԱԿ ՀԻՆ-ՆԱԽԻՋԵՆԻՑ

Օգոստոսի 20-ին

Ջրի հարցը այս ամառ ինչպէս Երևանի նահանգի շատ տեղերում, նոյնպէս և մեղանում ուժգին կերպով հարվածեց արդիւնաբերութեան գործին ու երեւան հանց շատ ցաւեր: Չը նայած գիւղացու տաղանդալից վիճակին ջրաբաշխութեան գործի մէջ, շատ տեղեր սկսեցին գործ գնել ոյժ, բռնութիւն, խորամանկութիւն և կաշառք: Ծանկարծ տեսնում էիք ամբողջ մի գիւղի ջրի հերթը կտրվում, ուրիշ գիւղի էր յանձնվում. մի ուրիշ տեղ գիւղի վաշխառուն, որպէս ուժեղ, բուն խումբ էր ջուրը թող գիւղացիների ձեռքից և այդ անկանոնութիւնները օր օրի վրա շատանում էին ջրաբաժան ինժեների բացակայութեան պատճառով:

Արաբսի ափի մօտ ընկած է Աստապատ անունով հայաբնակ մի մեծ գիւղ. նոյն գիւղի մօտ «Նախիջևան» գետը թափվում է Արաբսի ծոցը: Աստապատը «Նախիջևան» գետի երկու ափերի վրա գետեզված բազմաթիւ գիւղերից ամենափոքրն է կաղնում, հէնց դրա համար էլ այդ գիւղը արտօնութիւն է վայելում տարէնը երեք անգամ երեքական օրեր՝ դարնան, ամառվայ և աշնան ընթացքում, օգտվելու «Նախիջևան» գետից բոլոր գիւղերին տրված ջրերով, կամ որքան Աստապատի կարիքը հոգալու համար հարկաւոր կը լինի: Այդ երեք օրերը Աստապատի համար «գրգռված» օրեր՝ են կոչվում: Փանի որ Թմբուզ գիւղը շատ հեռու չէ Աստապատից, ուստի Թմբուզի առուի ջուրն էլ այդ օրերում շատանում է կրկնապատկվում, քառապատկվում է: Աստապատի ամառվայ «գրգռված» օրերն էին օգոստոսի 27, 28 և 29-ը. «Նախիջևան» գետից Թմբուզ հոսող ջուրը ուժեղ բողբոջներ (խմբեր) վրա է բաժանվում. ամեն ուժեղ օրից յետոյ՝ օր ու գիւշեր, պատկանում է խմբերից մէկին և հետևաբար այդպէս էլ հերթով շարունակվում է գիւղում ջրաբաժանութիւնը. և այդ «գրգռված» օրերը որ խմբի հերթի մէջ որ ընկնում, նոյն խումբն էլ լրակատար իրաւունք է վայելում օգտվելու շատացած ջրից. որովհետեւ «գրգռված» շարունակվում է երեք օր, կը շարունակի գիւղի շատացած ջրից կօգտվեն երեք խմբեր: Ջրի շատանալու օրերի միջոցին Թմբուզում այդ օրերի ջրի հերթը պատկանում էր երեք զանազան խմբերի և ոչ թէ Թմբուզի անտուրիին, որը համարեաւ ամբողջ գիւղի չափ ցանրեր է արել. սակայն տաւուտերը մտածեց և գտաւ միջոցը, որ այդ շատացած բոլոր ջրից ինքն օգտվի: Ահա թէ ինչպէս երկու «բողբոջներ» ջրաբաժանը երկու օր

կանխել ենք էլ պարզվեց. ուրախալ լուրը խնդրին վնասական կերպարանք տուեց, դաղթելու միտքն իսպառ մեղծվեց, վնասեցին մնալ գիւղում, իսկ մինչև Ամին աղայի համակը գիւղը պաշտպանողական դրութեան մէջ դնել: Ռաշիդը յանձն առաւ միւս օրը վաղ առաւօտից իր ընկեր երիտասարդների հետ գիւղի փողոցներում սահ գեւաւներ կապել և գինված հսկողութիւն կատարել գիշերները: Խորհուրդը վերջացաւ: Փողովակները մէկիկ-մէկիկ լուծվեամբ դուրս եկան և ցրվեցին:

Վաղ առաւօտից ամենքը ոտի վրա էին, գիւղը զննվում էր, գիւղը դրվում էր պաշարման դրութեան մէջ: Պէտք էր փողոցների ծայրերում պատնէշներ, հողաթերք կազմել, կամ սայլերով ու գերաններով արուեստական ցանկապատեր սահ գեւաւներ շինել: Ոմանք փորում էին, ուրիշները հողը բարձրացնում թմբերի վրա, մի այլ փողոցում թափված էին սայլեր, լուծեր, գերաններ, որոնք հետզհետէ իրար հազցնելով փակեցին փողոցի մուտքը: Պարագ ձեռներ չը կային, աշխատում էին նոյն իսկ ժամուկներն ու կանայք, պաւաններն էին միայն, որ պատրաստութիւնների բոլոր շարագուշակ անաւորութիւնը և սպանաւոր թշուառութեան բոլոր լրջութիւնն զգալով, խրճիթների դռները առաջ կանգնած, վախ-վախ էին անում, իրանց ծնկները ձեռնում չորացած ձեռներով և մարած աչքերից արտատուր խոճուկ կաթիլներ էին բաժնում:

Մինչև գիշերը գիւղի պաշտպանողական բոլոր

տանեակ հրային լեզուներ սոսկալի որոտով ակրեցին թանձր խաւարը և բազմաթիւ գրնտակներ անախորժ վզվողով դարկվեցան այս ու այն պատնէշին, այս ու այն հողաթիւնին: Երիտասարդները չորս կողմից պատասխանեցին նոյնպիսի հրացանաձգութեամբ: Թշնամիների խմբի մէջ չիլով ու աղմուկ բարձրացաւ: Սպանվածներ ընկան արդեօք, թէ ձիւք ստակեցան, այդ ոչ ոք չիմացաւ. միայն ստուերները ցրիւ կեան և լսվեցին սրարշաւ հեռացող ձիերի տրոփիւն: Սարխայիները անսպասելի զիմաղուսթեան հանդիպելով և գիւղը պաշտպանված գտնելով թողին հեռացան: Անշուշտ նրանք փոքրիկ խմբով եկել էին մի փոքր անելու ապագայ յարձակումների աջողութեան համար, կամ աւանակալ յարձակումով սարսափահար անելու ջնած, անպատրաստ գիւղը, բայց նրանց յոյսերն ի դերս անցան:

Լոյսը բացվեց, դարձեալ արևը ծագեց Մարալ սարերի թիկունքից և արարա-աշխարհի հետ լուսաւորեց նաեւ այս սարսափած գիւղը: Տները կոնտեսած կտուրներից մի քանիսի վրա ծխի ողորապոյտ սիւներ երևեցան: Կանայք վառեցին թոփրները ձաջ եփելու: Ոչ ոք չը գընաց դաշտ աշխատելու, գիւղն այս առաւօտ չաղմկեց դաշտ փնտրողների երգերով և ուրախ կատակներով. անաւորներն անգամ գոմերում փակված մնացին տխուր բառաչելով:

Արևը բարձրացաւ:

(Կը շարունակվի)

և երկու գիշեր ինքնակամ, հակառակ ջրատեղի-
քի ցանկութեան, յանձնեց գիւղի կայուածատե-
րեքին, որոնք այդ ջրի վրա ոչ մի օրինակով ի-
րաւունք չունէին. այդ երկու խմբերը իրանց
ջրերից զրկվեցին, հերթը փոփոխվեց և զորա-
վի՛ օրերը եկան տանուտէրի հերթին հասան,
որից ուրախ-ուրախ օգտվեց պարոն զլավան:

Տանուտէրի այդ ապօրինի վարմունքի դէմ
գիւղացիները օգոստոսի 1-ին հեռագրով բողո-
քեցին թիֆլիս ջրերի տեսչին (ИНСПЕКТОРУ ВОДЫ)
և օգոստոսի 8-ին մի գրաւոր խնդիր ներկա-
յացրին Հին-Նախիջևանում նորեկ ջրբաժան ին-
ժեներ Զուկովին. յուլիսի 28-ին գրաւոր բողոք-
վեց տեղական պոլիցիային. խնդրեցին բովան-
դակութիւնը մօտաւարտագէտ հետեւաւն է. «Քըմ-
բուլի շինական տանուտէրը, դիմելով ոյժի,
բռնութեամբ երկու օր ու գիշեր գիւղի ջուրը
բաշխեց կալուածատէրերին, հակառակ մայիսի
22-ին, № 12, Հին-Նախիջևանում ջրբաժանների
խորհրդի կայացրած վճիռն, որով այդ ջուրը
արգելվել էր կալուածատէրերին տալ (զլավան
նոյն խորհրդի անդամ է). կալուածատէրերին
ջուրը բաշխելով՝ փոփոխվեց ջրբաժանութեան
հերթը և «զբաղվել» բոլոր ջրից օգտվեց տա-
նուտէրը. խնդրում ենք զլավային պատաս-
խանատւութեան ենթարկել և մեր չորացած-
ների համար մեզ բաւարարութիւն տալ: Եւ
երբ խմբելը Զուկով օգոստոսի 11-ին եկաւ
Թմրուլ և անձամբ տեղեկացաւ տեսաւ, թէ
ինչպէս գիւղացիք արտառվում էին, տե-
սաւ բամբակի չորացած արտերը, տեսաւ
տանուտէրի հարելուսը դեմտախններով ցա-
նած բամբակի կանաչ արտերը, տեսաւ նրա մի
քանի հազար պուրկերով ցորենի կլեքը՝ և դարձա-
ցաւ: Ամբողջ գիւղը հացի կարօտ է, որովհետեւ
չորացել է արտ ու պարտէզ, բամբակ ու այգի:
Եւ երբ ինձնէրը դաշտերը ընդունց յետոյ՝
գիւղի աղբիւրների ջրերն էր չափում, այդ մի-
ջուցին շինական դատարանին չը հասած՝ տա-
նուտէրը մտրակի հարուածներով պատռեց
դանդաղաւորներին մէկի գլուխը. դա բողոքա-
տու: Սարգիս Մինասեանցն էր... Անձ թէ ինչով
է վարձատրվում մեզանում ոյժի դէմ բողոքողը...
Տանուտէրի կատարած այդ քաղաքականութեան
դէմ նոյնպէս գրաւոր կերպով բողոք է ներկա-
յացված գաւառապետին: ***

ՆԵՐՍԻՆ ԼՈՒՐԵՐ

Մեզ հաղորդում են, որ Ներսիսեան դպրոցի
վարչութիւնը այս տարի ստիպված եղաւ հա-
րիւրաւոր երեխաների մերժել, տեղ չը լինելու
պատճառով: Ինքը ծնողները՝ արտասովորով հե-
ռանում են դպրոցից, և չը գիտեն թէ ո՞ր տա-
նէն իրանց երեխաներին, ում դիմեն: Դպրո-
ցում տեղ չը լինելու պատճառն այն է, որ հին
շինութիւնը շատ փոքր է, իսկ նոր շինութիւնը
կառուցանելուն էլ միաձմեռ երեք տարի է դի-
մադրելով դիմադրում է: Դժբախտ ժողովուրդ-
մարդիկ ուզում են նոր դպրոց շինել, իսկ ժո-
ղովրդի «ՏՈՂԵՆՈՐ» իշխանութիւնը՝ այդ էլ է
արգելում: Ինչը ժողովուրդը...

Կ. Պօլիցի «НОВОСТИ» լրագրի թղթակիցը գրում
է. «Ես իմացայ որ Երզր-Քեօսկում վճռված է
ցուցակագրել Կ. Պօլիցի ապրիլ բոլոր հայերին
և այս նպատակով հրաման է տրված որ հայերը
յայտնի մի օր գնան ոստիկանատուն թիւրք գի-
նաւորների ուղեկցութեամբ: Այդ միջոցը ձեռք
են առել այն պատճառով, որ լուրեր տարած-
վեցան, թէ Լօնդօնից ճանապարհվել է յայտնի
հայ ազդեալատու Քէլեքեան, որ կեղծ անցագիր է
ձեռք բերել և այժմ կորել է անհետ: Պատմում
են որ Քէլեքեան ընկերակցներին մէկը, մի
գովուռնացի, որ շատ նման է նրան, գնացել է
հիւպատոսարան և խնդրել է ստորագրել իր ան-
ցագիրը, որովհետեւ մտադիր է Կ. Պօլիս գնալ
իր աւետարանական գործերով: Ստանալով անցա-
գիրը, նա տուեց Քէլեքեանին և յետոյ սկսեց պար-
ծենալ իր ճարպիկութեամբ, այնպէս որ այդ
լուրը հասաւ Լօնդօնի թիւրքաց դեսպանութեան,
բայց կեղծիք կատարողն անյայտացաւ և այժմ
նրան որոնում են: Կ. Պօլիցի այս բանը յուզում
առաջացրեց և կառավարչական շրջաններում
համոզված են, որ դատարանին է կազմակերպ-
վում:»

«Արարատի» մէջ կարդում ենք. «Տփլիսա-
բնակ Ալեքեանը յօժարութեամբ յանձն առան
իրանց ծախքով մշտապէս ուղարկելու Մայր
Աթոռի ճեմարանից եկած երիտասարդ սարկա-
ւազներին հերթով Ռուսաստանի համալսարան-
ները: Այս էլ միաձմեռ օրացան աւելացնում է,
որ Կաթողիկոսը ընտրեց ճեմարանի նախկին
սան Ներսէս սարկաւազ Տէր-Միքայէլեանին,

որը և ուղարկվեց Մոսկույի համալսարան՝ ի-
րաւաբանութիւն ուսանելու:

Մեզ հաղորդում են, որ երկրագործութեան
միջնորդութիւնը մտադիր է ներկայ աշնան ա-
միսներում ուսումնասիրութեան ենթարկել այն
ձմեռային արտերը, կամ տեղական խօսքով
եւթ աղն երբ, որոնք գտնվում են թիֆլիսի
գաւառի Նաղուշա սարում, Բարաքեարում և
Ալ-Քարլիս կայարանի մօտ: Այդ ձմեռացիները
պատկանում են պետութեան, որ վերցնում է
առանձին հարկ անասուններ արածացնելու հա-
մար: Ուսումնասիրութեան նպատակը պէտք է
լինի պարզել դանդաղ արօտատեղերի որակու-
թիւնը, գնահատել նրանց և հետագոյն անաս-
նապահութեան ներկայ վիճակը:

Խօսելով հաղորդակցութեան ճանապարհ-
ների միջնորդ իշխան Մ. Խիլիօվի վերջին ճա-
նապարհորդութեան մասին («Новое Время» լրա-
գրի թղթակիցն ասում է. «Թիֆլիսում միջնոր-
դը առանձին ուղարկութիւն դարձրեց տեղական
երկաթուղային հարցերի վրա: Հարուստ Կախ-
թիան արդէն վաղուց է խնդրում իր բերրի հո-
ղերը բախտաւորեցնել երկաթուղային նոր գծով,
որը տեխնիկական կողմից առանձին դժուարու-
թիւններ չի ներկայացնում: Հետադարձութիւններ
են լինում նոյնպէս դէպի Նրեան՝ երկաթուղու
դիմ անցկացնելու, և յոյս կայ, որ աշնանը կը
կազմվի վերջնական նախագիծ՝ այդ գիծը կա-
ռուցանելու համար, սկսելով Թիֆլիս-Կարսի
երկաթուղային գծից, որի բնւնները արդէն 98
վերստ տարածութեան վրա պարտաւոր են:»

Մեզ խնդրում են տպագրել հետեւեալը. «Ցան-
կալի է, որ Ներսիսեան դպրոցի վարչութիւնը
փոքր ի շատեւ ուղարկութիւն դարձնի աշակերտ-
ներին արտաքինի վրա, որպէս զի նրանք, մա-
նուանդ նորեկ աշակերտները դպրոց յաճախէին
աշակերտական ջրհովիտում և անախորժ տպա-
ւորութիւն չը թողնէին: Այս իրադրութեամբ հա-
մար առանձին բան չէ պահանջվում, միայն
խելացի կարգադրութիւն, մանաւանդ որ այդ-
պիսի կարգադրութիւն, ինչպէս իսկ ենք, եղել է
Յ. Սպենդիարեանի տեսլական միջոցին և
մի առ ժամանակ իրագործվել է:»

«Кавказское Сельское Хозяйство» շաբաթաթեր-
թը հաղորդում է, որ Նրեանի նահանգի Այեսա-
լու գիւղում երեացել է խաղողի վաղերի վրա
միլիոն 5 հիւանդութիւն: Դա նոր երևույթ է
Նրեանի նահանգի համար, որովհետեւ այնտեղ այդ
հիւանդութիւնը մինչև այժմ նկատված չէ եղել:

ՇՈՒՇՈՒՑ մեզ գրում են. «Մեր քաղաքի ջօշե-
րը և թեմական դպրոցի անուանական հողա-
բարձրները ներկայացան ամենայն Հայոց Կա-
թողիկոսին և խնդրեցին, որ նա բարեհաճէ հո-
գաբարձութեան իրաւունքների վերաբերմամբ
հարկաւոր տնօրէնութիւն անել: Վեհափառը
պատասխանեց. «Այդ մասին կը խորհիմ և ձեզի
կասեմ, երբ կը վերադառնամ Ամարասոյ և
Գանձատարայ վանքերը այցելելէ յետոյ: Ե՛հ, ապ-
րիք, դիմացէ՛ք, օրհնաւ ըլլաք:»—Վեհափառի
ընդունելութեան համար կազմված յանձնաժո-
ղովի գործունեայ անդա մեկն են՝ Գերասիմ Մէ-
լիք-Շահնազարեանց, Ստեփան Իւրաչեան, Մը-
նացական Խոնուրեց:»

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԹԵՐ ԵՒ ԴԵՄ ԿԱՐՑԻՔՆԵՐ

Ռուսաց կառավարութեան օգոստոսի 12-ի
նշանաւոր հրաւերի առաջին տպաւորութիւնը
անցնելուց յետոյ եւրօպական մամուլն սկսել է
աւելի հանդարտ և պաղարին կերպով ջննել
միջազգային խաղաղութեան այդ մեծ ակտի
նշանակութիւնը:

Իտալական լրագրները պրինցիպով համա-
կրութիւն յայտնելով Ռուսաստանի առաջարկու-
թեան, գտնում են սակայն, որ դիվալմատիա-
կան այդ քայլը միջազգային նոր բարդութիւն-
ների առթիւ պէտք է լինի: Գերմանական «Köln.
Zeitung» լրագրը այնպիսի խորհրդածութիւն-
ներ է անում, որ պարզ ցոյց է տալիս Գերմա-
նիայի կառավարչական շրջանների տրամադրու-
թիւնը: Նա ասում է, որ Բիսմարկ բաժանում
էր ժամանակակից պետութիւնները կուշտ և
անկուշտ պետութիւնների և դրանով որոշում
էր նրանց քաղաքական ձգտումների տարբերու-
թիւնը: Եթէ առհասարակ հնարաւոր է միջազ-
գային համաձայնութիւն կայացնել զինաթափ-
ման խնդրի մասին, այդ միայն մի պայմանով—
status quo պահպանելու պայմանով: «Բայց—
շարունակում է լրագիրը—ենթադրեմք անհնա-

րինը. ընդունեմք, որ Գերմանիան համաձայնի
տալ այն, ինչ որ իրաւունքով իրան է պատկա-
նում. արդե՞ք, ուրիշ պետութիւնները, հետեւե-
լով Ֆրանսիայի օրինակին, հիմք չէին ունենալ
նոյնանման պահանջներ անել: Արդե՞ք Սպա-
նիան յետ չի պահանջի Կուբան, Չինաստանը՝
Յորժօզան: Վերջ ի վերջոյ հարկաւոր կը լինի
իրերի այժմեան վիճակը այլափոխել և վերջին
25 տարեկան բոլոր դաշնագրերը վերաքննել:
Անձ ինչ վտանգներ կան: «Vorwärts» լրագիրը
Մուրափէվի շրջաբերականը համարում է մի
«խեղճ շախմատային խաղ» ռուսաց դիվալմա-
տիայի կողմից: «Ռուսաստանը, ասում է նա,
սպառնալիքած է ոտքից գլուխ, բայց նրան
դեռ անպայման հարկաւոր է հեռացնել անխու-
սակելի ընդհարման քաղցն Անգլիայի հետ հա-
մաշխարհային տիրապետութեան համար, մինչև
որ վերանորոգի և ուժեղացնի իր ծովային զո-
րութիւնը Խաղաղ ովկիանոսում և շինի իր եր-
կաթուղիները Ասիայում: Ռուսաստանը ստիպ-
ված է ամեն բան անել պատերազմի յետաձը-
գելու համար. այդ պատճառով շրջաբերականը
մի շատ ճարպիկ քայլ է...: Ֆրանսիական «Gau-
lois» լրագիրը ասում է. «Քո՛ղ պ. Ֆոր հաղորդի
մեզ, թէ ինչ բանի է յանգելու այդ գործը: Ռու-
սաստանի վրա անհրաժեշտ է յարձակվել և նրան
յաղթել, բայց մեր բանը այլ է. մենք չունենք
սահման. գործը միայն զգալուսներին մէջ չէ...
երկու նահանգների կորցնելով մենք շատ տկա-
րացանք. Ռուսաստանը, Գերմանիան, Անգլիան
և Միացնալ-Նահանգները ամեն բանի մէջ մե-
զանից առաջ են գնացել. պ. Ֆոր և իր կառա-
վարութիւնը պէտք է հարց տան իրանց,—ար-
դե՞ք զինաթափութիւնից Ֆրանսիան այնքան
օգուտներ կը քաղի, ինչքան Ռուսաստանը, և
ինչի մէջ պէտք է կայանան այդ օգուտները:»

ՆԱՄԱԿ ԱՄԵՐԻԿԱՅԻՑ

Նիւ-Եօրկ, օգոստոսի 9/21-ին

Ամերիկո-սպանական պատերազմը ապրիլի
25-ին սկսվեց և պաշտօնապէս դադարեց կամ
զինադադար եղաւ օգոստոսի 12-ին: Ֆրանսա-
կան զենապետը և միջնորդ Դէյ, երկար բանակ-
ցութիւնից յետոյ՝ առաջին պայմանագրին ստո-
րագրեցին «Վաշինգտոնում» «White House»-ի
մէջ. այս լուրն իսկոյն հաղորդվեցաւ բոլոր ծո-
վակալներին և զորավարներին:

Միացնալ-Նահանգների ժողովուրդը՝ մանա-
ւանդ բանւոր դասը մեծ ուրախութեան մէջ է:
Պատերազմը 4 ամիս տևեց և այս տակալի չորս
ամիսները տխուր, անտանելի օրերի շարունա-
կութիւններն էին խեղճ բանւորների և առհա-
սարակ ձկաւոր ըրտիներով օրական ապրտու-
նայթաթից դասի համար. պատերազմի պատ-
ճառով զրեթէ առևտուրը դադարել էր, գործա-
րանքներից շատերը փակվել կամ մասամբ կրճա-
տել էին գործերը: Նրանց մէջ աշխատող գոր-
ծաւորները տաննեակ հազարներով անգործ թա-
փառում էին. մուրաղիւնութիւնը, որ օրէնքով
խիստ արգելված է, յուրիպ սկսած՝ համաճա-
րակ էր դարձել. ոստիկանութիւնը չէր յանդգ-
նում հաց մուրացողներին արգելել: Ո՛վ գիտէ,
գուցէ նրանց աղաքաբեկած էր չարգելել մու-
րացողներին, որպէս զի խառնութիւն չը ծագէ:
Վեհափառ միջնորդները անհամեմատ լիարդացել,
անմատչելի էին դարձել աղքատ դասին: Դեռ

պատերազմի սկզբում ցորենավաճառ կապիտա-
լիստները միջնորդների ղեկերը փակեցին:
Ցորենը չէր արտահանվում դէպի Նիւօրա, ուս-
տի ամբողջ պաշարը մնալով Ամերիկայում,
պէտք է էժանանար. այսպէս էին մտածում ա-
մերիկացիները: Սակայն ոչ թէ էժանացաւ, այլ,
ընդհակառակն, օր ըստ օրէ բարձրացաւ: Սա
մի ճանելուկ էր ամերիկացիների և մի շատ հա-
օարակ խաղ վաշխառուների համար. օրվայ
հացով ապրողներ զրուլիւնը անտանելի էր
հաղում: 94—95 թվականների վրձուար օրերը
վերսկսվում էին, խռովութիւնները անխուսա-
փելի էին դարձել և ահա պատեհ ժամանակին
խաղաղութեան հրատարակութիւնը՝ հանդար-
տեցրեց ժողովրդին, և ակնկալելի մեծ յուզ-
մունքներին առաջն առաւ:

Ներու երկրիներին մէջ էլ՝ պատերազմի արհա-
ւելքներին ենթարկվողը, տնտեսապէս տանջվո-
ղը հառարակ մահկանացուները՝ բանւոր դասն
էր: Հարուստները, ամեն տարվայ պէս՝ ամա-
ռանոցներում իրանց սովորական գութաճու-
թիւններին անձնատուր եղած՝ շուայում են
բանւորների ջնորթով շահանքները, իրանց ամե-
նաչնչին հաճութիւնները համար հազարներ են շը-
պրում, իսկ այս տարի գործարաններին հսկե-
լու հոգեբեր ժամանակաւորապէս ազատված
հարուստները մի առանձին հաճոյքով են անց-
կացնում ամառվայ ամիսները: Սրանց ինչ

փայլն էր, թէ իրանց գործաւորները, քաղցից
չը մեռնելու համար, ստիպված են դռնէ դուռ
հաց մուրալ: Այս էր պատճառը, որ բանւորնե-
րը առանձին հաճութեամբ վերաբերվեցին խա-
ղաղութեան լուրին և շտապեցին իրանց ուրա-
խութիւնը արտայայտել, երբ Սամպսոնի և Նէյի
նաւերը Կուբայի ափերից վերադառնալով՝ օ-
գոստոսի 20-ին, չարաժ ուր, հասան Նիւ-Եօրկ:

Հարկը հաղար դուրս էր յատկացրած յաղ-
թական նաւերին փառաւոր ընդունելութիւն
ցոյց տալու համար. նաւերը, Հրտաժն գետի
ծովաբերանից մտնելով՝ նոյն օրը պիտի գնային
զօրավար Ֆրանդի դերեզմանը ողջունելու: Գե-
տեղերը, թէ մեծագոյն Նիւ-Եօրկի և թէ Նիւ-
ձէրդիի կողմը, Միացնալ-Նահանգների աստե-
ղադարձ գրօշակներով զարդարված էր, անհա-
մար բաղնիքները ծովացած՝ անհամբեր սպա-
սում էր Սամպսոնի և Նէյի նաւերի յաղթական
մուտքին: Գետի մակերեսը անթիւ նաւերով,
նաւակներով և մակույններով ծածկված, նոյն-
պէս զարդարված մեծ ու փոքր գրօշակներով՝
երկու քաղաքը միացրել էին: Շատ հեռու-
թեամբ՝ նաւից նաւակ ցատկելով կարելի էր մի
վերստաչափ լայնութիւն ունեցող Հրտաժն գետի
մի ափից միւսն անցնել. նաւերի և նաւակների
վրա սրպատողները մեծ մասամբ առհասարակ
պիւտրների ծնողները, և աղակալներն էին,
որոնք փափագում էին րոպէ առաջ դիմաւորել
իրանց սիրելիներին: Գետաբերանի երկու կող-
մում՝ քաղաքների կողմից յաղթութեան պսակ-
ները պիտի ներկայացնէին զօրապետներին ու
զօրքին: Ահա խնդրոթիւնները գոտացին և նա-
ւերը հանդիսարան կերպով մտան գետաբերա-
նից. ամբողջ ուրբաներով թնդացնում էր օդը,
միլիոնաւոր ձեռքեր՝ զուրինքից վեր բռնած
աստեղազարդ գրօշակներն ու զլխարկները օդի
մէջ ճօճելով՝ Good Wellcome էին գոռում յաղ-
թական զինուորներին: Տեսարանը հիանալի էր,
զինաւորողների հրուանքը անպատմելի:

Սակայն ուրախութեան հետ նկատելի եղաւ
և տրտմութիւնը. այդ րոպէին, երբ եանկները
ցնծութեան աղաղակներով և հրճուանքով էին
ընդունում իրանց յաղթական նաւերի վրա
կանգնած հպարտ, բայց արեւառ, կերպարանա-
փոխուած զինուորներին, հազարաւոր մայրեր,
քոյրեր և եղբայրներ արտասուք էին թափում
իրանց սիրելիների համար: Մինչև պատերազմի
վախճանը դեռ ոչ ոք չը գիտէր, թէ ո՞վ է մե-
ռել պատերազմի դաշտում, որովհետեւ պաշտօ-
նապէս սպանվածների անունները հրատարա-
կուած չէին: Բայց այժմ, ո՛հ, խեղճ մայրեր, պաշ-
տօնապէս յայտարարվեց ձեռք գաւալների կո-
րուստը. անտանելի է ձեռք դրութիւնը, որդե-
կորոյս, վրա՛նար մայրեր: Ձեզ հետ սուգ են ա-
նում ամբողջ Միացնալ-Նահանգները: Բայց ու-
րան եղէ՛ք, երանելի մայրեր, ձեռք որդու մահը
կանցը տուեց միլիոնաւոր մարդկանց: Այսուհե-
տեւ ձեռք որդու անունը կը յաւերժացնէ Միա-
ցնալ-Նահանգների պատմութիւնը, իսկ Կուբան
ամեն տարի իր աղաւտութեան օրը տօնելիս՝ ե-
րախտագիտութեամբ և գոհունակութեամբ կը
յարգէ նրանց յիշատակը:

Սամպսոն և Նէյ՝ երկու նահանգներին ող-
ջունելուց յետոյ, ուղևորեցին իրանց ուխտը
կատարելու: 2. Արդումանեան

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Ֆրանսիական մամուլի մի մասը խիստ
կերպով ընդադաւում է գեներալ Բուալըֆրի
հրամարակներ, ասելով, որ այն րօպէին, երբ
պէտք էր երես առ երես կանդնէր իր գործած
սխալի դէմ, նա փախուտ տուեց:

—«Italia» լրագիրը հաղորդում է, որ երեք-
պետեան դաշնակցութեան պետութիւնները ըն-
դունեցին կոնֆէրենցիա գումարելու առաջար-
կութիւնը անպայման:

—Անգլիական լրագրներին ասելով ժամտախ-
տը Բոմբէյում զարհուրելի չափեր է ընդունում
Բոմբէյի մէջ ժամանակների մեռածների ընդհա-
նուր թիւն է 23,800: Կուբրիում արդէն 2269
մահվան դէպքեր են եղել և ամեն օր մեռնում
է 60 մարդ:

ԻԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Հոս Կոստական եղբայրացիութիւնն էր Այս
օրերն «Մշակ» մէջ տպագրեցին մի նկատու-
ածութիւն պոետիկական կարծիքի դէմ, որ նրանց
յայտնում են ռուսացիների մասին: Ինքնեզոյնե-
րի Հետաքրքրութեան լիւթիւն տալու համար առաջ
ենք բերում մի կտոր այդ «Հոստոսական եղբայրու-
թիւնից», որ ապված է «Մասիս» լրագրում: Ահա.

—«Ինչպէս գտաք թիֆլիսը, Տիկին, և ինչ
տպաւորութիւններ բերիք անկէ:

—Օ՛հ, մի հարցնե՛ք, յուսախաղութիւն: Պոլիս
եկող թիֆլիցի հայերը այնքան խիստ կերպով
ընդադաւած են միջոց գտել, որ կը կարծիք
աւելի զարգացած կեցւորն մը դառնել հոն, աւելի
նուրը հայ ընկերութիւն մը, աւելի ուսնալ,
հասկնող մարդիկ: Բայց ոչ: Թիֆլիզ գաւառա-
կան քաղաքի մը տպաւորութիւնը թողուց վ

